



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13356

13357

13358

13359

13360

342

W. 23

47

ԱՂԳԵՅՈՒՆ

Հ. ԱՂԳԵՅԱՆ . Տ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ՍՄԱՏԱՐԱՆ

1860

Հ. ԱՂԳԵՅԱՆ . Տ

7399

Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Ք Ե Ա Ն

Յ. ՄԱՏԹԷՈՍԻ

ՄՐԱՋԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ո Ւ Ք Ե Ա Ն

ՊՈՍԱՆԴԻՆՈՒԳՈՒԼՍԻ

Յ. ՍԱՐԳՍԻ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

7907-57

Յ Ե Ն Կ

ՀՈՐԵԱՆՆ ԸՆԴՏՈՒՆԵ.	3
ԳԼՈՒԽ ԱՐՁԱԿ. Ազգային վարչութիւն.	7
1. Կեդրոնական վարչութիւն.	40
Ա. Ազգային ընդհանուր ժողով.	40
Բ. Պատրիարք.	42
Գ. Ազգային կրօնական ժողով.	44
Դ. Ազգային փառաքանական ժողով.	45
Ե. Ազգային Ուսումնական խորհուրդ.	46
Զ. Ազգային Տնտեսական խորհուրդ.	47
Է. Ազգային Էլեմտական խորհուրդ.	49
Ը. Ազգային Գաղափարական խորհուրդ.	20
Թ. Թաղական խորհուրդներ.	24
Ճ. Ազգային Դիւանատուն.	22
2. Գաղափարական վարչութիւն.	24
Ա. Գաղափարական ընդհանուր ժողով.	25
Բ. Առաջնորդ.	25
Գ. Գաղափարական ժողովք եւ խորհուրդք.	26
ԳԼՈՒԽ ԵՐԵՎԱՆ. Ազգային սուրբ.	26
ԳԼՈՒԽ ԵՐԵՎԱՆ. Ընդհանուր ընտրութիւն.	27
Ա. Ընտրական օրէնք.	27
1. Ընտրողութեան պայմանք.	27
2. Ընտրելիութեան պայմանք.	28
Բ. Ընտրութիւն երեսփոխանաց.	29
Գ. Ընտրութիւն Պատրիարքի.	55
Դ. Ընտրութիւն առաջնորդաց.	57
Ե. Ընտրութիւն ժողովականաց եւ խորհրդականաց.	57
ԳԼՈՒԽ ՉՈՐՀՈՐԴ. Ներքին կանոնադրութիւնք ազգային ժողովաց եւ խորհրդաց.	59
Ա. Պաշտօնական կանոնք.	59
Բ. Ատենական կանոնք.	40
ԳԼՈՒԽ ՀԻՄՆԵՐՈՐԴ. Վերաջննութիւն Սահմանադրութեան.	42

147

Մ. Գ. Ե. Յ. Ի. Ն

Հ. Մ. Ս. Ս. Ս. Ս.

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Յ

Հ. Մ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Հ. Մ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

1860

Հ. Մ. Ս. Ս. Ս. Ս. Ս.



6
 7
 10
 11
 12
 13
 14
 15
 16
 17
 18
 19
 20
 21
 22
 23
 24
 25
 26
 27
 28
 29
 30
 31
 32
 33
 34
 35
 36
 37
 38
 39
 40
 41
 42

Պատրիարքական կնքով չէ վաւերաց-
եալ օրինակաց ճշգրտութիւնը երաշխա-
ւորեալ է՛ն:

37
 38
 39
 40
 41
 42
 43
 44
 45
 46
 47
 48
 49
 50
 51
 52
 53
 54
 55
 56
 57
 58
 59
 60
 61
 62
 63
 64
 65
 66
 67
 68
 69
 70
 71
 72
 73
 74
 75
 76
 77
 78
 79
 80
 81
 82
 83
 84
 85
 86
 87
 88
 89
 90
 91
 92
 93
 94
 95
 96
 97
 98
 99
 100

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ս Ե Զ Մ Ե Ն Ե Գ Բ Ո Ի Բ Բ Բ Բ

ՀՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔ

Ե.

Ա Ջ Գ Մ Ն ամեն մէկ անհատը առ Եզգը պարտաւորութիւններ ունի. Եզգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. գարնեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Եզգէն և Եզգն անհատներէն.

Ե յս պայտօքներն որոշող և այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային Ս արչութիւն կը կոչվի, որում Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց անօրէնութիւնը.

Բ.

Եզգային Ս արչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունք է. Եմնայն անօրէնութիւն ազգային որ չ'է համաձայն սոյն սկզբանց, ո՛չ արդար է և ո՛չ օրինաւոր.

Գ.

Եզգն ու ազգային Ս արչութիւնը փոխադարձ պարտիքներով կապված են իրարու հետ.

Դ.

Մարտիկոս պարտականութիւնն է՝ Ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան շահովը, Ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային Աջարութեան ըրած անօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ:

Ե.

Ազգային Աջարութեան պարտականութիւնն է՝ Ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հարստանեաց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու արանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը Ազգին ամեն աստիճանի թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, Ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը իմաստութեամբ անտեսել, Ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և արագան անդորրել, կարօտելոց իմամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել, և վերջապէս Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել:

Զ.

Ահա այս ամեն պարտիքները կատարելու և իրաւունքները ապահովելու գիտամամբ է որ Ազգը հետեւեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կ Ղ Ն Ն Ի Կ

1. Քարէրագոյն Դրան շնորհած արածու թեանը համեմատ

Ազգային Արչու թիւնը երեսփոխանական է .

Ազգը ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ և անոր միջնորդութեամբ կը վարէ զազգային իշխանութիւնը .

Ընդհանուր ժողովը՝ Ազգին ընդհանրական գործոց անօրէնութիւնն իրեն պահելով, սփորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ . կրօնական գործոց մասը՝ Կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը . իսկ խառն գործոց անօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ զաղովը ձեւացած խառն ժողովին կը յանձնէ .

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանու մը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը զատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով .

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յաւակացեալ շորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Աշխատական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը .

Մատակարարութեան 'համար' Պօլսի մէջ թաղահան խորհուրդներ կը հաստատէ թաղին եկեղեցւոյն անուամբ, և անոնք մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհուրդին կը յանձնէ։ Ազգային խորհուրդոց տեսչութեանը տակ։

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսի Պատրիարքն է, և կեդրոն՝ Պօլսի Պատրիարքարանը։

Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գլուխներով Ազգին Պատրիարքը՝ Պօլսի մէջ ազգային Աւարչութեան կենդրոնական մասը կը կազմեն, որոց իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի։

4. Ազգային կենդրոնական Աւարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կը ներկայանայ Պաւստական ժողովներով, որոնք Պօլսի գաւառ Ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոց պաշտօնական գլուխ՝ վեմակին Առաջնորդն է, և կեդրոն՝ տեղին Առաջնորդարանը։

5. Պաւստական վարչութիւնը նոյն փոխադարձ արարածօք կազմած է գաւառարձակ ազգայինոց հետ, ինչպէս կեդրոնական Աւարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ, և իրեն յարացոյց պետի բունէ ըլլ կեդրոնական Աւարչութիւնը։

6. Պաւստական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ Արձական և Քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը։

Այս ժողովները քաղաքին թաղերուն մէջ թաղահան խորհուրդներ կը հաստատեն իրենց վերստեսչութեանն ու համարապետութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբե-

բութիւններով որով կը վարվին Աղբակահան Ժողովները Պօլսի Թաղական խորհրդոց հետ:

Նմանապէս իրենց վերաանուածութեանն ու համարաւութեանը տակ Թեմական խորհուրդներ կը հաստատեն, և ամեն մէկ Թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր Թեմական խորհրդին կը յանձնեն:

Պատմութիւն

7. Իւրաքանչիւր Ժողով և խորհուրդ իր մասին մէջ ներհաս է համարատուութեան պարտանով:

Գաւառական վարչութեան մէջ Թաղական ու Թեմական խորհուրդները համարատու են Գաւառական Ժողովներուն: Գաւառական Ժողովները համարատու են գաւառական Նշահանուր Ժողովներուն: Գաւառական վարչութիւնը կեդրոնական Աւարչութեան համարատու է, և Նշահարդը Պատրիարքին:

Աղբակահան վարչութեան մէջ Պօլսի Թաղական խորհուրդները համարատու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին: Տեսուչ խորհուրդները համարատու են ազգային Քաղաքական Ժողովին՝ բաց ի Ռատատանական խորհուրդէն որ համարատու է Խոսուն Ժողովին:

Արծնական ու Քաղաքական Ժողովները և Պատրիարքը Նշահանուր Ժողովին համարատու են:

Նշահանուր Ժողովը բարոյապէս պատասխանատու է Ազգին առջև:

Օրէնքներ

8. Ազգային վարչութեան՝ Ազգին հետ, Արարատեան մայր Աթոռին հետ, Իարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան:

Մ. Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար փարփել .
 Մ. Բարասեան մայր Մթառին հետ՝ աւանդապահ
 մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեաց
 մէ անտի կապովս են իրարու հետ Մ. Ազգն ու Մթառը .
 Ն . Վրան հետ՝ թէ Մ. Ազգին և թէ ազգայնոց կրօնա-
 կան ու բազաբական իրաւունքները պահպանելու
 համար Տէրութեան պաշտպանութիւնը խնդրել , և
 Մ. Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ
 Տէրութիւնը .

Այն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է .

4. ԿԵՆՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Ազգային Ընդհանուր Ժողով

9 . Մ. Ազգային Մեծ հանուր Ժողովը կը բաղկանայ 220
 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160—ը Պօլսի Թա-
 դերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ , և 60—ը առաջ-
 նորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ .

Մեծ հանուր Ժողովին մէջ ազգային երեսփոխանաց
 անդամակից են .

Նախ՝ ազգային կեդրոնական Արչութեան ան-
 դամներէն՝ Արձնական ու Քաղաքական Ժողովներուն
 և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թա-
 դական խորհուրդներուն աստե՛նապեանները .

Մ. Կարգի անդամաց թիւը իբր 100 է . բայց
 այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշգիւ չը կրնար
 աւելցիլ . վասն զի ասոնց մէջ արդէն երեսփոխան
 ընտրվածներ ալ կրնան գտիլ .

Արհարող՝ Մ. Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը
 մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք որոնց ար-
 ժանաւորութիւնը Մ. Ազգին կամ Տէրութեան կողմէն

վկայեալ կը համարվի, ինչպէս են Ահեղեցական դասէն՝ Պօլիա գտնող եպիսկոպոսները, Պօլիի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերեցները։ Ասու մնական դասէն՝ ազգային մասննագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասաւասուներ, լրագրապետներ։ Քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Ռ. Կրան գիւտներուն մէջ անօրէններ և Թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ անօրէններ, ուսումնապետներ։ Օսնաւորական դասէն՝ վերին լրագրից աստիճանակիցներ։

12. յս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար ճշտովի վերոյիշեալ պատճառով. բայց իրր ըսկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չը պիտի հաստատրի երեսփոխանաց թիւին ()։

10. Բնդհանուր Ժողովը էն շատը 400 էն աւելի անդամ չը պիտի ունենայ, և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը այսինքն 111-ը գտնէ ներկայ չ'ըլլայ նիստ չը պիտի կարենայ ընել։

11. Բնդհանուր Ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնաւորները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և ազգային ծանր կամ ընդ հանրական գործերը վճարար անօրինել։

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան ըսկզբունքները անխախտ պահել և անոնց որսմանդրութեանցը համեմատ վարվիլ։

12. Բնդհանուր Ժողով կը գումարվի։

Նախ կանոնաւորապէս ամէն տարի մարտ ամսին

1 Այս յօդուածը վերաքննելի է երբ թէ՛ ազգային եւ թէ՛ Տէրութեան պաշտօնաւորաց թիւը այն աստիճան աւելնայ որ անկարելի ըլլայ սոյն համեմատութիւնը պահել։

վերջերը ազգային Արշուժեան տարեկան ընդհանուր համարատուութիւնը մտիկ ընելու, ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու և ազգային տարեկան աւարքին անտրե՛նութիւնը հաստատելու համար: Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ աւարքի խնդիրէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ խօսք միայն ունին և ո՛չ քուէ:

27. Վարչութեան ընտրութեան մասնակից ըլլալու համար:

37. Արուսազէմաց և Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար:

47. Արձակաւն ու Քաղաքական ժողովոց մէջ կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց համար: Սոյն պարագայից մէջ ալ Արշուժեան անդամները խօսք միայն ունին և ո՛չ քուէ:

57. Ազգային Սահմանադրութեան վերաբնուութեանը համար:

Այս վերջնայէս արտաքոց կարգի պատահած այնպիսի ծանր խնդիրներու համար՝ գործնք Ազգային ժողովները ՚նդհանուր ժողովով որոշել հարկաւոր դասեն:

13. ՚նդհանուր ժողով կը հրահրեն, նախ՝ Պատրիարքը՝ Ազգին կողմէն, երկրորդ՝ ՚նդհանուր ժողովին ատենապետը՝ սոյն ժողովին գիւանին կողմէն, երրորդ՝ Արձակաւն կամ Քաղաքական ժողովին ատենապետները՝ սոյն ժողովոց կողմէն:

Բ. Պատրիարք

14. Պատրիարքը Ազգային ժողովոց նախագահն է և անոնց գործադիր խիանութիւնը կը վարէ:

15. Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ ո՛ր

ժողովին ձեռնհասութեանը տակ է նե՛ն նոյն ժողովին քննութեանն ու որոշմանը պիտի յանձնէ, և ազգային՝ որոշմանց մէջ իր պաշտօնական գրութիւնքը անվարեր պիտի համարվին եթէ ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չ'ըլլան . իսկ երբ ըստիպօղական գործ մը պատահի որոյ անօրէնութիւնը չը ներէ սպասել մինչև ժողովոց գումարման օրը և արտաքոյ կարգի՞ ժողով գումարել կարելի չ'ըլլայ : Պատրիարքը կրնայ ինքնին տնօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ աննելով, բայց եղելու թիւնը կանոնադր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ խնայնէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար :

16. Պատրիարքը իր բացակայութեան տանն Ազգային ժողովներու մէջ արված որոշում մը չ'ստորագրած՝ իրաւունք ունի դիտօղութիւն ընելու և ինքիքը կրկին քննութեան առնել տալու . իսկ երկրորդ որոշումէն ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան և արամադրութեանցը անհամեմայն չը զանէ :

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան արամադրութեանցը հակեմատ չը վարվող ազգային գործակալ մը, պսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, փանքի, դպրատան կամ հիւանդանոցի մասակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արդիւնելու առաջարկութիւն ընել որում որ անկ է :

18. Պատրիարքը իրաւունք չ'ունի Ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու . բայց երբ որ անանէ թէ այն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց ասենապետին հետ կը բանակցի բացասութիւնն ուղելու համար . երկրորդին՝ գրով խնայ կուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի կարգ կը հը-

բաւիրէ զանի: իսկ երրորդին՝ Մեղհանուր ժողով կը կուէ եթէ անբաստաններն Ազգային ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, և պատճառներն խնայեցնելով անբաստանեալ ժողովին լուծու մը կը պահանջէ:

19. Պատրիարքը ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ, և Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վնայ ըլլայ:

Կ. Ազգային կրօնական ժողով

20. Կրօնական ժողովը 14 քանիքուն եկեղեցականներէ կը բաղկանայ:

21. Կրօնական ժողովին պաշտօննէ՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեաց Ս. Ա. Եկեղեցւոյ գաւառութիւնն ու ասանդութիւնքը անխախտ և անարատ պահել, եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել, քահանայից կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու հոգ տանել, արժանաւոր ու քանիշուն եկեղեցականներ հասցնել, և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը բննել ու լուծել:

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր խնդիր մը զոր Կրօնական ժողովը չը կարենայ լուծել, Մեղհանուր ժողովին բազմական գումար եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժողովն ալ իր նեղանհատութենէն վեր գառտ ըզ խնդիրը, Երարատեան Մայր Աթոռին պէտք է դիմէ:

23. Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ վարդապետի և քահանայի նեղանորութեան հրամանք Կրօնական ժողովէն կը տրուի:

24. Վանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըզգայ և թաւազական խորհրդին միջնորդութեամբ չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրվի:

25. Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն աւազներէցնեքը Արծնական ժողովը կ'որոշէ, և Պատրիարքը կ'անուանէ:

26. Արծնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգեւոր պաշտօնները ձրի կատարվին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ազրին:

Գ. Ազգային Քաղաքական ժողով

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարեւորութիւնը յայտնարկելն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բանապահ հոգ տանիլ, և Մզգին բարեկարգութեանն ու յառաջդիմութեանը ըստ անենայնի փոյթ ունենայ:

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չ'առած չը անօրինէ:

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառով մը՝ չը հաստատել կամ ետ ձգել խորհրդի մը ըրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում և գործադրութիւն ընել:

31. Քաղաքական ժողովը իրաւունք չ'ունի զՂԳ-
գային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ
Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ
ընթացքի մէջ չը տեսնէ զանի: Իսկ եթէ պատահի այս-
պիսի պարագայ մը, առջի անգամին՝ անոր ատենացե-
տէն բացառութիւն կ'ուզէ, երկրորդին՝ զրով խնց
կուսաց խորհրդին և կարգի կը հրաւիրէ զանի, իսկ
երրորդին կը լուծէ. բայց Ղ'նդհանուր ժողովին արժեյու-
տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառ-
ները պետք է որ բացատրէ:

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր
խնդիր մը զոր քաղաքական ժողովը իր ձեռնհասութե-
նէն վեր դատէ, Ղ'նդհանուր ժողովին պետք է որ'զի մէ

Ե. Ազգային Ուսումնական Խորհուրդ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական
աշխարհականներէ կը բաղկանայ:

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգա-
յին դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իբ պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց
բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակու-
թեան ընդհանուր հիմնագիր մը և դպրոցական կանոն-
ներ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վար-
ժարանաց մէջ միջոցնակ ընթաց մը որոշել թէ ուս-
ման և թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսու-
մը ծաւալել, աջկանց դաստիարակութեանը յատուկ
կերպով հոգ տանել, այն նպատակով հաստատել ըն-
կերութեանց խրախոյս տալ և ձեռնառու ըլլալ, ազգու-
յին դաստիարակաց կացութիւնը չաւցնելու և տար-
զան անշարժելու խնամ տանել, Եզգին մէջ քանիբուն
դասաւանդներ հասցնելու և դպրոցաց ընտիր դասու-
գիրքներ պատրաստելու փոյթ ունենալ:

35. Ուսումնական խորհուրդը պետք է իր կողմէն

ամենայն ջան ի գործ դնել որ՝ թէ Պօլսի և թէ զաւա-
ներու մէջ ամեն թաղ սկզբնական զաստիարակութեան
զպրօցներ ունենան, նոյնպէս Պօլիս և ստաշնորդա-
նիստ քաղաքները մէջսէկ այգային ուսումնարանն ու-
նենան զասական ուսմանց համար: Այս ուսումնա-
րանէն վկայականով քիչն են աշկերտները, և մասնա-
ւոր ուսմունք ընտելերուն՝ զաստուութեան վկայա-
գիր ալ կը տրփէ:

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային
փարժարանաց մէջ ընդունվելու զասագիրքներն ու
զասատուները: Իսկ քրիստոնէական վարդապետու-
թեան զասագիրքն ու զասատուն Արձնական ժողովէն
պէտք է որ ինչդրէ:

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ
ազգային փարժարանաց տարեկան քննութեանը: Իսկ
քրիստոնէական վարդապետութեան մասին քննու-
թիւնը Արձնական ժողովին նեւաքը կ'ըլլայ:

2. Ազգային Տնտեսական խորհուրդ

38. Տնտեսական խորհուրդը 10 անտեսագէտ աշ-
խարհականներէ կը բաղկանայ:

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային
հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան
ընդհանուր տեսութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ սոյն հաստատութեանց
պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ:

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւան-
դանոցի համար մասնաւոր հոգաբարձութիւններ կը
հաստատէ և անոնց միջնորդութեամբ կը մատակա-
կարէ զայս հաստատութիւնները:

41. Անօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ
կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշ-
խարհական:

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս հոգարար-
 ձուները և Քաղաքական Ժողովին հաստատութեամբը
 Պատրիարքը կ'անուանէ .

42. Անտրեից հոգարարձուի թեան նպատակը պի-
 տի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտներն ու
 հասոյթները Լղզին օգտին ծառայեցնել . նախ՝ փնտ-
 րելից մէջ ուսումնարան հաստատելով՝ Արձուական Ժո-
 ղովին և Ուսումնական խորհրդին առանձ հիմնադրին
 համաձայն , և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց ,
 սպարան , թանգարան .

43. Անտրեից հոգարարձուի ներ իւրաքանչիւր
 փների համար երկերիս գործակալ պէտք է ունե-
 նայ տեղացի , որմեր փնտհօր նախագահութեամբը
 կը մասնակարարեն ըզ փները՝ Պաւսասիան Ժողովէն ան-
 կախ կերպով .

44. Հիւանդանոցի հոգարարձուի ներ եօթ հո-
 գիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշի .

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս հոգարար-
 ձուները և Քաղաքական Ժողովին հաստատութեամբը
 Պատրիարքը կ'անուանէ .

45. Հիւանդանոցի հոգարարձուի թեան նպատակը
 պիտի ըլլայ սոյն հաստատութիւնը իր նպատակին ծա-
 ռայեցնել , հոն անտրինելով նախ՝ կանոնաւոր Հիւան-
 դանոց մը ազրատ հիւանդաց համար . երկրորդ՝
 Պատասպարան մը ձեր ու անկար աղքատաց հա-
 մար . երրորդ՝ Օգաստարան մը անասական համար .
 չորրորդ՝ Արթարան մը որ ու անակրուել տղայոց
 համար .

Եւ օթեփաններուն իւրաքանչիւրը թէ շէքի և
 թէ կարգի կողմէն բժրչիական կանոնաց և սղջպահիկ
 օրինաց համաձայն պէտք է կարգադրեաց ըլլայ .

46. Առական անտրեւութիւնը Տնտեսական խոր-
 հրդին կը վերաբերի . Եւ խորհուրդը պէտք է հսկէ

որ ամեն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կտակօղին գիտաւորութիւնը անխախտ պահփի և գործադրութիւնը սպասող ըլլայ:

Այն արամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մասնաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը:

Արդ կտակին գործադրութիւնը կտակօղին գիտաւորութեանը համեմատ չ'ըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու:

47. Թէ՛ պօլսի և թէ՛ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (11է՛է՛7, 2է՛է՛7, 9է՛է՛2) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողովրդավար ազգային Վիւանատան մէջ պիտի պահփին ամենայն սպասողութեամբ:

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հսկէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ:

49. Ազգային ս'ր և է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրուիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանը, Քաղաքական ժողովին համութեանն ու Պատրիարքին կերպարութեանը:

Այն արամադրութեանց ու ժողով Գ-Թ-Ե-Ա-Գ-Ե ըստ ըստ բանք վերցած է:

50. Պօլսի մէջ և շրջակաները ազգային ս'ր և է շինութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական և Արհեստական խորհրդոց գիտութեանն ու Քաղաքական ժողովին համութեանը:

Վանապէս ազգային ս'ր և է հաստատութեան համար ստակ չը կրնար ժողովրդիլ առանց վերոյիշեալ պայմանին:

Ե. Ազգային երևտական խորհուրդ

51. Արհեստական խորհուրդը՝ 10 հաշուադէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

52. Աշխատեալան խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասութից և ծախուց ընդհանուր անուշութիւնը և ազգային սնտուկին համարակալութիւնը :

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւորապէս անել, ծախուց օրինաւորութիւնն ըստուղել, ազգային եկամուտներն աւելցնելու ջանք ընել՝ այն աստիճան որ օր մը ազգային սնտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր ասւրջը մեծապէս թեթեւաց :

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր ասւրջ, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն. ելքն են գլխաւորապէս՝ Պատրիարքարանի և Դիւանատան ծախք, շիւանդանոցի ծախք, կարտեպ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացը նպաստ և այլ պատահական ծախքեր :

54. Ազգային սնտուկին հաշիւը ամարակալութեան կանոնով պիտի բանրվի :

55. Աշխատեալան խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կը ելով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ :

Ը. Ազգային Դատատանական խորհուրդ

56. Դատատանական խորհուրդը 10 իրաւասէր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական :

57. Դատատանական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դատատանական գործոց ընդհանուր անուշութիւնը :

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները ազարութեամբ իրաւաբաժն ընելու ջանալ և իր վճիռ-

ներուն հիմ բունել կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ կանոնները, և բազաբական մասին՝ Տէրութեան գառարանաց արդի կանոնները:

58. Արք պատահի այնպիսի խնդիր մը զոր Ղառաւանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկէ անոր կը դիմէ:

59. Ղառաւանական խորհուրդին մէջ գտեալ անձ մը միշտ իրաւունք ունի Արօնական կամ Վաղարական ժողովին բողոքելու կամ խառն ժողով պահանջելու ըստ գործին:

Թ. Բաղական խորհուրդներ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն 5 էն մինչեւ 9 անդամներէ:

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ Թաղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյն եկեղեցականութիւնը, գաղթական հոգարարութիւնը, ազբատաց խնամակալութիւնը, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ Թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանելը, Թաղին մէջ Թէ ազջկանց և Թէ աղայոց համար բնիզնական գառարարական բարեկարգ գաղթատուններ ունենալու ջանք ընելը, և Թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնառու ըլլալ:

62. Թաղերուն մէջ Թէ եկեղեցւոյ և Թէ գաղթական ս'ր և է կալուած Թաղական խորհուրդին անմիջական անօրէնութեանը տակ է. այսպիսի կալուածոց գնութե ու վաճառումը ըստ 49. Ծօղ. կը գործադրվի:

63. Անն Թաղ մէյմէկ անտուկ պիտի ունենայ Թաղական խորհրդին հսկողութեանը տակ:

Այս անտուկին մատքն են՝ Թաղական տուրքը, եկեղեցւոյ և գաղթական կալուածոց եկամուտները,

եկեղեցւոյն հասցիները, աղքատաց համար եղած նուէրներն ու կտակները և այլն. ելքն են՝ թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները .

64. Ամէն թաղական խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և փախճանմանց արձանագրութիւնը պէտք է որ ունենայ հանձնաւոր կերպով .

65. Թաղական խորհուրդները իրենց պաշտօններուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին . եկեղեցւոյանութեան գործերու համար՝ Տնտեսական խորհրդին հետ, դպրատանց ու սուսնական մասին համար՝ Աւսումնական խորհրդին հետ, գրասեփական գործերու համար՝ Աշխատեցնողական խորհրդին հետ, դատական գործերու համար՝ Պատաստանական խորհրդին հետ .

Թաղական խորհուրդը երբ չը կրնայ հախաւհորդները իրաւախոհ ընել, գործը Պատաստանական խորհրդին պէտք է ղրկէ իր քննութեան տեղեկագրով .

Ժ. Ազգային Դիւանատուն

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի հաստատուի որոյ գործը պիտի ըլլայ ազգային պաշտօնական գրութեանց տնօրէնութիւնը .

67. Դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնրվի .

ա . Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն ղրկուելու գիրերուն և ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւ որութեանը կ'ըզբաղի .

բ . Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանը կ'ըզբաղի .

գ . Ազգահամար, որ ազգայնոց քաղաքային վիճա-

կազմութեանը՝ այսինքն ծննդեան, ամուսնութեան և փախճանման վերաբերեալ արձանագրութեանց կազմակերպութեանը կ'ըզրազի: Սոյն գրասենեակէն կը սրբվին ազգայնոց թէ՛ ճամբորդութեան համար և թէ՛ առևտրական գործողութեանց համար պէտք եղած փութրական թուղթերը, նաև ծննդեան, ամուսնութեան և փախճանման վկայականները:

68. Թղթակցութեան գրասենեակը՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին չափ զիւանադպիրներ պիտի ունենայ: Այս գրասենեակը Պատրիարքին հրամանին ներքե է և ինք կ'անուանէ ասոր անդամները Քաղաքական Ժողովին համաութեամբը:

Արձանագրութեան գրասենեակը վեց զիւանադպիր պիտի ունենայ. երկուքը Արժանական ու Քաղաքական Ժողովներուն գործոցը յատկացեալ, և չորսը՝ չորս Տեսուչ խորհուրդներուն գործոցը կարգեալ:

Այս գրասենեակին անդամները ամեն մէկը իր վերբերական Ժողովին կամ խորհուրդին հրամանին ներքե է, զորոնք նոյն Ժողովները կամ խորհուրդները կ'ընտրեն և Պատրիարքը կ'անուանէ Քաղաքական Ժողովին համաութեամբը:

Ազգահամարի գրասենեակը պիտի ունենայ նոստաքմը, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ:

Այս գրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կ'աւելնայ կամ կը պակսի:

69. Դիւանատանը պիտի ունենայ զիւանապետ մը որ Դիւանատան բոլոր գործոցը անօրէն և պատասխանատու է, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ:

Դիւանապետը կ'ընէ Անդհանուր Ժողովին զիւանադպրութիւնը:

70. Ղիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն և հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ Տննոց, ամուսնութեանց և վախճանմանց ամարներուն՝ օրինակները պահանջել և ազգային Ղիւանապետին ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել սալ՝

71. Ղիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցող և տաճկերէնի ու Ֆրանսերէնի բառական հմտութիւն ունեցող անձ մը պէտք է որ ըլլայ. Ղիւանապետ գիւանադպիրները ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան՝

72. Ղիւանադպիրները մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերըբրտական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Ղիւանապետին առջեւ՝

73. Ազգահամարի գրասենեակէն արված օր և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և Ղիւանապետին ըստորագրութեամբը վաւերացեալ պէտք է ըլլան՝

74. Ազգային գիւանապետներ ամեն օր՝ ութ ժամ բաց և Ղիւանադպիրները ներկայ պիտի գտնուին բաց ի ասնելի օրերէն. Աթէ ասնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհուրդին Ղիւանապետը նոյն օրը ներկայ պէտք է գտնուի՝

2. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Գաւառական Ընդհանուր Ժողով

75. Գաւառներու մէջ ընդհանուր ժողով կը կազմվի թաղական և թեմական երեսփոխաններէ, ու

բոց անդամակից են նախ՝ գաւառին Արօնական և Քաղաքական ժողովներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն աստեղագետները, երկրորդ՝ Ազգին կամ անդրական իշխանութեան ծառայութեանցք մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք • (տես Յօդ. 9) •

76. Գաւառական Անդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւր իր գաւառին կողմէն երեսօխոսանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել, Արօնական ու Քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը անօրինել •

Բ. Առաջնորդ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ •

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել •

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ • այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ուր կը գումարդին և գաւառական ժողովները •

79. Առաջնորդը գաւառական սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ •

Գ. Գաւառական ժողով և խորհուրդ

80. Գաւառաց Արօնական ու Քաղաքական ժողովները՝ ըստ անդոյն 7 էն մինչեւ 12 անդամներէ կը բաղկանան •

81. Պաւստաց թաղականն է և թեմական խորհուրդները ըստ տեղւոյն և են մինչև 9 անդամներէ կը բաղկանան :

82. Ամէն գաւառ իր Քաղաքական Ժողովին հրահարութեանը ներքեւ մէջէկ գաւառական սնտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց սնտուսութեանն ու համարակարգութեանը համար : նմանապէս ամեն թաղ և թեմ իր սնտուկը պիտի ունենայ :

Այս սնտուկներուն համարակարգութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարուի :

83. Պաւստներու մէջ ամէն Առաջնորդարան իր գաւառական գիւանտաւանք պիտի ունենայ : նմանապէս ամէն թաղ և թեմ :

Պաւստական գիւանտները պարտաւոր են գաւառին թաղական և թեմական ազգահամարները ժողովել և անոնցմով գաւառական ընդհանուր ազգահամար կազմել :

Գ Լ ՈՒ Ն Բ .

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ ՈՒ Ր Ք

84. Ամէն ազգային անհատ՝ որ չափահաս է և վստասկի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ : բաց անոնցմէ որոնց կարողութիւն չունենալը իրենց թաղին կամ թրեւնց արհեստակցաց կողմէն վկայեալ է :

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխման հիմ պիտի բանրովի իւրաքանչիւրին կարողութիւնը :

86. Արիւս կերպ է ազգային տուրքը : մէկը ընդ-

հանուր՝ որ ընդհանուր ծախուց յասկացեալ է և կը հաւրքովն կեցրնական վարչութեան կողմէն ազգային մտաւկին հանար • և միւր մանաւոր՝ որ մանաւոր ծախուց յասկացեալ է և կը հաւրքովն Թաղական խորհրդոց կողմէն Թաղական մտաւկին հանար •

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւարքման եղանակը Քաղաքական Ժողովին մէջ կ'որոշին և ընդհանուր Ժողովով կը հաստատուին • Իսկ Թաղական տուրքը ամէն թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ •

Սոյնպէս կը անօրինակին և գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու Թաղական մանաւոր տուրքը •

88. Գաւառները մանակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին •

Գաւառներուն կողմէն ազգային կեցրնական սրնատուկին արբիւլու մինչեւ ջարդ ստորաթիւն եղած սարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական մտաւկը իր հաւարած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրին այսբան պիտի սույ ազգային կեցրնական սրնատուկին •

Հարիւրին որքան արբիւլը Պօլսի Քաղաքական Ժողովը պիտի որոշէ •

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ը Ն Տ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. Ընտրական օրէնք

1. Ընտրութեան պայման

89. Ընտրելու իրաւունքը լինան 25 տարեոյ հասակէն կ'ըսկսի •

90. Ընտրելու իրաւունքին զրկեալ կամ արգիլեալ են դատաստանապէս .

Վախ՝ քրէական յանցանոր դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց Տէրութեան .

2՝ Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնրված և ազգային ասեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատող ասեանը ազգային գործոց մէջ չը գործածվիլը վճռած ըլլայ .

3՝ Տէրութեան կողմէն զգաստացուցիլ պատիւ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ասեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը . Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ասեանին կողմէն վկայի .

4՝ Ինքնազարութեան պատճառով անբաւական գտեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չ'ըլլայ .

5՝ Հարկ եղած ազգային տուրքը կարողութիւն ունենալով մերժող անձինք, որոնք ազգային եպերելի են իբր ազգային պարտեաց զանցաւու . Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել ըսկսին .

2. Ընտրելու արեւմտ

5 4 9 4 0 9 3 5 2

91. Ազգային գործոց անօրէնութեանը մէջ որոշողական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կ'ըսկսի .

Ամենայն անհատ ազգային որ եռսուն տարին ըլլացուցած է և չ'է դատաստանապէս զրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վաւելումէն, ընտրելի է ազգային ո՛ր և է պաշտօնի համար .

Բ. Ընտրութիւն ազգային երեսփոխանաց

92. Ընտրութեան հիմ պիտի բռնուի բնակչաց թիւը :

Պօլսի ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակվի :

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անգամ մը կը նորոգվի, ազգային Վիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն :

Եւս վերանորոգումը Աւարչութեան գլխաւոր անգամաց, այսինքն Արձնական ու Քաղաքական Ժողովաց ատենապետներուն և Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գարովը նեւացած Համախորհուրդ Ժողովին մէջ կ'ըլլայ :

93. Թե՛ Պօլսի թաղերէն և թե՛ գաւառներէն ուղիված երեսփոխանները հարկ չ'է որ, ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ բնակին, և ազգապիտութեան ու սրտուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած անձինք ըլլան :

Եւս երեսփոխանները չէ թե՛ գիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպվին Ընդհանուր Ժողովին մէջ, այլ Ըզգին երեսփոխաններն են համազօր իշխանութեամբ :

Ընտրութեան Իւր-Չի:

94. Ընդհանուր Ժողովին լուծվելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պօլսի թաղերուն կը ծանուցնէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուղիված երեսփոխանաց թիւը և կը հրաւիրէ ընտրողական Ժողով գումարել, յիշելով ընտ-

րելու թեան պայմաններն ու ընտրութեան կանոնները :

Սոյն կոնդակին օրինակը թաղական խորհրդարանին մէջ բացադրեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը :

95. Ամէն թաղի մէջ ընտրողական ժողովներ կը կազմըփե թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից բլալու արժանաւորութիւննին արդէն վիակեալ (տե՛ս Հօդ. 9.) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ :

Ընտրողական ժողովը 21 հոդիւ է կը բաղկանայ . եթէ թաղի մը մէջ վերայիշեալ անձներք այս թիւը չը բնեն , պակասը նոյն թաղին մէջ է՛ն շատ աւելք աւելող ընտրողացմէ պէտք է բնել :

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է . իր գիւանը կը բաղկանայ մէկ ատենապետէ , մէկ ատենադպրէ և երեք քննիչներէ :

Ընտրողական ժողովը թաղական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործարութեանց :

96. Ընտրողական ժողովը շնորհիւ մը կը պատրաստէ ու զխած երեսփոխաններու թիւէն եռապատակ աւելն ընտրողաց որոշումը գիւրայնելու համար :

Սոյն ցանկն ալ բացադրեալ կը մնայ թաղական խորհրդարանին մէջ , իսկ ընտրողք սչ մէկ կերպով ըստ պեալ են այս ցանկին հետեւելու :

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմանները ըստուգելով շնորհիւ մը պիտի պատրաստեն այրուբնի կարգով . այս ցանկը ութ օր բաց պիտի մնայ թաղական խորհրդարանին մէջ , որպէս զի թաղին ընտրովները կարենան իրենց անուանը վրայ գիտողութիւն ունին նէ՛ ընել :

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ շնորհիւ պէտք է տայ սոյն օրինակ .

Ա . . . ընտրող

Ա . . . (առաջին)

և ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ .

Եւ անց այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ որ պիտի կարենայ քրէտուփին մերձենալ .

99 . Այժէ ընտրութեան հրաւերը՝ որ և է պատճառով Պատրիարքին կողմէն չ'ըլլայ (տե՛ս Յօդ . 94) , ազգային Արչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին աստենայեալին ձեռք .

Այժէ ազգային Արչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու , և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ , այն աստէն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողովին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կողմելով կ'ընտրեն իրենց երեսփոխանները ըստ ընտրական կանոնաց .

Արքայ այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լիննայ , անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և զուրկ ամենայն իշխանութենէ , ուստի և ինչ որ գործէ կամ գործած է նոյն կետէն առջին , ապօրինաւոր է և ապաղօր իբրեւ չ'եղեալ .

Վ . . . (երկրորդ)

100 . Ընտրողաց ցանկին բացփելէն շարաթ մը ետքը՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետե՛ թագական խորհրդարանին մէջ քուէարկութեան կ'ըսկրպիւն սուպէս .

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջև ստորագրելէն ետքը՝

հան թուղթի մը վրայ քանի երեսօրօտան ուզված է նե՛ այնքան անձի անուն կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով և ամեն մէկ անուան առջեւ մակամուն, բնակութիւն, արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծաւրն քուէտուփին մէջ կը ձգեն:

101. Քուէարկութիւնը գաղտնի է. աւտի պէտք է որ քուէարկութեան անունին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը, որպէսզի ուրիշ մը չը կարենայ անունը գրված անունները:

102. Քուէարկութիւնը ըսկած օրը պէտք է ընձնայ:

Ընտրողացմէ ս՛վ որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չ՛ունի ետքը բողոքելու:

103. Այդ պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ:

104. Միացեալ թաղերն ու թեմերը՝ եթէ իրարու մաս ըլլան, մէկ տեղ գալով կ՛ընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հետի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կ՛ընեն ու ետքը քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն:

Քուէարկութեան

105. Քուէարկութիւնը ընձնալէն ետքը՝ նոյն օրը միևնոյն նիստի մէջ ընտրողական ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացվի. քննիչները քուէները կը համբնեն և քուէարկուաց թիւին հետ կը բազմապատեն. եթէ տարբերութիւն գտվի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարվի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և

ընտրողական ժողովը խարդախութեան կասկած ունե-
նայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ'որոշէ միւս օր
մը մինչեւ առաջիկայ կիրակին:

Մանասպէս եթէ ուզված երեսփոխանաց թիւը չը-
լցուի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ
անգամ ընտրութիւն կ'ըլլայ ուրիշ օր մը:

106. Աթէ պատահի օր մէկը պէտք եղածէն ա-
ւելի թըւով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին
մէջ, նոյն թիւէն ետքը եկած անունները անընդու-
նելի են:

Մանասպէս վերէն 'ի վար կարգով չը գրված անուն-
ներուն քուէթուղթը անհամարելի է:

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէ
ըստացողներուն մէջ էն շատ ըստացող անձները երես-
փոխան ընտրված են:

108. Աթէ մէկ կամ երկու անգամով առ աւելու-
թիւն չ'ըստացի, ընտրողական ժողովը կը ծանուցնէ
էն շատ առ աւելութիւն ըստացող երկու անունները,
և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն եր-
կու անունաց վրայ կ'ըլլայ:

109. Աթէ հաւասար քուէ պատահի երկու ան-
ձանց վրայ, երկուսոցնը ընտրեալ է:

Պ Ե Ի Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ

110. Ան ընտրողական ժողով իր թաղէն կամ
գաւառէն ընտրված երեսփոխանաց անունները Քա-
ղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղ-
եայ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ձրջիլ նշա-
նակված ըլլայ քուէթուղթին օրինակը, այսինքն՝ ընտ-
րեալին անունը, մականունը, բնակութիւնն ու ար-
հեստը և քուէարկութեան բոլոր պարագաները:

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկա-

գիրները քննելով, կ'ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը:

Մ. յս ըստուգութենէն ետքը Պատրիարքը պաշտօնական կերպով խնայ կուտայ նորընտիր երեսփոխանաց և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը:

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ՝ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընելով՝ ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ:

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարովի երբ երեսփոխանաց մեծազոյն մասը՝ որ Պօլսի մէջ է՝ ընտրութեամբ ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ դաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան լուրը մէկ կողմէն Պօլս հասնելու վրայ կ'ըլլայ:

113. Աթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը գաւառներու կողմէն ընտրութեամբ ըլլայ, ինքք կ'որշէ սր թաղին կամ սր գաւառին երեսփոխանութիւնն ընդունելու: Աթէ ինքք չ'ուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ:

Սոյն պարագային մէջ ընտրող թաղին կամ գաւառին խնայ կը արգիւնէրիշ երեսփոխան մ'ընտրել:

Սոյնպէս կ'ըլլայ երբ վստահաման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակաս ըլլայ:

114. Դոքտորանին մէջ բացառիկապէս պէտք է մնայ երեսփոխանաց ցանկը սցրութի կարգով շինված, որոյ մէջ թըւականութե կը նշանակվի անուան աջեւ՝ հրաժարում, վստահամում, և այլն: Արևմտապէս երեսփոխանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից (Յօդ. 9) եղող անձանց ցանկը: Մ. յս ցանկերը հինգ տարին անգամ մը կը նորոգվին Ընդհանուր ժողովին նորոգմանը հետ:

Ըստ հարկին գործածելու համար՝ երեսփոխանաց մէջմէկ տպեալ ~~արտադրել~~ երեսփոխանութեան պէտք է արգիւն այն օրինակ .

Ա Ազգային երեսփոխան

(Ա՛ Բէտ---)

(Ը---) (Ը---)

Ե Ծակաւոր պատրիարքական կեդով կիւրեալ .

Գ. Ընտրութիւն Պատրիարքի

115. Պատրիարքը պէտք է որ Էջմիածնաց Սոբորով ղեկավարէն ձեռնադրեալ կամ անկէ իւր Էջմիածնաց եպիսկոպոս ընդունեալ անձ մ'ըլլայ և Օսմանեան Տէրութեան հարստակ .

116. Արձականու Քաղաքական Ժողովները իտան ժողով կազմելով ընտրելութեան պայմաններն ունեցող եպիսկոպոսաց և վարդապետաց արժանիքը կը քննեն թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական մասին և կ'որոշեն երեք ընտրելի որոնց անունները Ընդհանուր Ժողովին կը ն'ըկայացնեն .

Ընդհանուր Ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վայ գաղանի քուէարկութիւնը ըլլալով մի որ մեծագոյն մասին հաւանութիւնը ըստանայ, անի' կ'ըլլայ օրինաւոր Պատրիարք Ըզդին .

Այթ է առաջին անգամին մեծագոյն մաս չը վատարկվի, երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ . եթէ երկրորդին ալ չը յաջողի, երկու անուելողոյն քուէ ըստացողաց անունները կը ծանուցվի ղիւսնին կողմէն և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վայ կ'ըլլայ .

Այթ է պատահի որ քուէները երկու անձի վայ հաւատարապէս բաժնրվին, այն ատեն երկուքին մէկը փնտհով կ'ընտրվի .

Աթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս Աջ-
միածինն կը դռնիզի եպիսկոպոս ձեռնադրովելու համար:

117. Ընտրութիւնը ընկնուէն ետքը տեղեկագիր
մը կը շինվի զոր բոլոր բազմականք կ'ըստորագրեն, և
որոյ օրինակը՝ Մեղհանուր ժողովին կըբովը կըբեալ
Խառն ժողովին միջնորդութեամբը Խ. Կրան կը մա-
տուցվի որ կ'անուանէ ըլլ Պատրիարքը:

118. Կորընտիր Պատրիարքը՝ դեռ Խ. Կրան չը
ներկայացած՝ Ալեքեղեցոյ մէջ և Մեղհանուր ժողովին
ատջև հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. « Ըսա-
ջև Ըստուծոյ և առաջի Ազգիս Հայոց ներկայացեալ
Մեղհանուր ժողով ուխտեմ հաւատարիմ թեալ Ազ-
գային Սահմանադրութեան և հսկել բոլոր սրտով նո-
րին անթերի գործադրութեան »:

119. Աթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ
պահասութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան
տակ կ'ընկնի:

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը
կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ Արմեական
ժողովին և կամ Քաղաքական ժողովին կողմէն կրնայ
ըլլալ:

Արք սոյստիսի ամբաստանութիւն մը պատահի,
Մեղհանուր ժողովը կը գումարվի և իր մէջէն քննիչ
յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ
(7 եկեղեցական, 7 թաղական երեսփոխան, 7 գաւա-
ռական երեսփոխան) որոնք, ամբաստանազայ մէջէն
պէտք չ'է որ ըլլան:

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը քննե-
լով, տեղեկագիր կու տայ Մեղհանուր ժողովին որ
գաղանի քուէարկութեամբ կ'որոշէ խնդիրը: Աթէ
այս որոշումը՝ որ ըստորագրեալ պէտք է ըլլայ որոշման
կողմը քուէ տուող ժողովականներէն, Պատրիարքի
հրատարումը վճռած ըլլայ, երկու ժողովոց ատենա-

պետաները Պատրիարքին կը ներկայացնեն որ յայնժամ
Լոզին որոշ կամքը տեսնելով հրաժարականը տալու
պարտաւ որեւէ է :

121 . Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւ որ եպիս-
կոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը անօրինակ իրան
ժողովին կողմէն :

Գ. Ընտրութիւն Առաջնորդաց

122 . Ընտրութիւնը ընտրութիւնը գաւառական Ընդ-
հանուր ժողովին մէջ կ'ըլլայ նոյն և նման Պատրիարքի
ընտրութեան :

Այն ընտրութիւնը գաւառական իրան ժողովին
միջնորդութեամբ փաւերական տեղեկագրով կը ծա-
նուցի Պատրիարքին որ կեդրոնական իրան ժողովին
հաւանութեամբ կ'անուանէ զՄ. աջնորդը :

123 . Ընտրութիւնը Մ. աջնորդը Սահմանադրութեան դէմ
պակասութեան մը մէջ գալիս, ստրատատանութեան տակ
կ'ընկնի Պաւառական ժողովոյ կողմէն . և ընտրութիւնը
ըստ 120 յօդուածին ըլլալով գառը կեդրոնական իրան
ժողովին մէջ կը տեսի որ ըստ ստատուածին կը անօրինէ :

Ե. Ընտրութիւն Ժողովականաց և Խորհրդականաց

124 . Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Արժանական ու
Քաղաքական ժողովոյ անդամները :

Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տեսուչ խորհրդոյ
անդամները բաց 'ի Պատտատանական խորհրդէն որոյ
եկեղեցական անդամները Արժանական ժողովը կ'ընտրէ :

Պատտատանական խորհրդին անդամները 40 տա-
րին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ
ըլլան :

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական խորհրդ-

դին անդամները թաղին Մարտոզական ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց :

Սոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը :

125. Մեզ հանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծփն և ապրիլի ըսկիցը կը նորոգփն :

Արձական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները ամէն տարի մարտի վերջը կ'իսով չափ միայն կը լուծփն և ապրիլի ըսկիցը կը նորոգփն (1) :

Թաղական ու Թեմական խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծփն և ապրիլի ըսկիցը կը նորոգփն :

Սոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովաց և խորհրդաց նորոգումը :

126. Ազգային երեսփոխաններն ու Թաղական և Թեմական խորհրդականները անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար : Իսկ Արձական ու Քաղաքական ժողովաց և Տեսուչ խորհրդաց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չ'են նոյն պաշտօնին համար, ուրիշ մը և է պաշտօնի համար վերընտրելի են :

Սոյնպէս է նաև գաւառներու մէջ գաւառական պաշտօնու որաց վերընտրութիւնը :

127. Ամէն անգամ որ Ազգային ժողովներն ու խորհուրդները նորոգփն, նորընտիր անդամաց ջանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակփն :

(1) Առէն անգամն միայն՝ ժողովականաց և խորհրդականաց կէտն լուծուից վերակով կ'որոշփն :

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ԺՈՂՈՒՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

1. Պ-Լ-Ի-Ն Ի-Ն-Ն

123. Ամեն ժողով և խորհուրդ պետք է ունենայ աստեճան գիւսան մը, ոչ կը բաղկանայ աստեճան պետ մը, աստեճանագրէ մը և պետք եղածին շափ փոխանորդներէ զորոնք ժողովն իր մէջէն կ'ընտրէ.

Այն անդամին երկնայաբունին աստեճանագրուած թեամբը և կրտսերագունին աստեճանագրուած թեամբը նիստ կ'ընէ և իր գիւսանը կը կազմէ.

124. Աստեճանագրուած պաշտօնն է՝ աստեանը բանալ և գոցել, աստեանին ներքին վարչութիւնը անորինէլ, վեճարանու թիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանու թեանը հրահել և աստեճանագրուած կարգով խօսք տալ.

125. Աստեճանագրուած պաշտօնն է՝ աստեանին մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու արված պատճառարանու թիւնները ճշգիւ նշանակել, և աստեճանագրութիւնը հետեւեալ աստեանին ներկայացնել, և ամեն աստեանին խնդիրներու ջանկը պատրաստել առաջնու թեան կարգով.

126. Աստեճանագրուած աստեճանագրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չը գտված աստեաններուն մէջ գանձը փոխանակել.

127. Աստեճանագրուած գիւսանը տարին անգամ մը կը նորոգվի և անդամներն անվճարապէս վերընտրելի են.

Քնդհանուր ժողովին գիւսանը 3 տարին անգամ մը Քնդհանուր ժողովին հետ կը նորոգվի.

133. Արժուական ու Քաղաքական Ժողովներն ու Տեսուչ խորհուրդները շարախն անգամ մը կը գումարվին ի Պատրիարքարան որոշեալ օր մը :

Ատենապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի Ժողով կամ խորհուրդ գումարել ըստիպողական պարագայի մէջ :

Մեզ համար Ժողովին գումարվելու օրը լուրերի միջոցով պէտք է ծանուցիլ զանէ երեք օր առաջ :

134. Աւանց մեծագոյն մասի ներկայութեան նխար անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջին որոշում չը կրնար տրվել :

135. Աւանց ատենապետի և ատենադպրի ստեանն չը կրնար բացվել :

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով ատենապետը կամ ատենադպիրը և անոնց փոխանորդները ներկայ չ'ըլլան, երիցագումնին ատենապետութեանն ու կրտսերագումնին ատենադպրութեանը կը բացվի ատեան :

136. Ատենապետէն խօսք չը խնդրած և չ'առած ներեի չ'է խօսիլ ատեանի մէջ :

137. Խնդիր մը առաջարկել ու զօգը՝ նախ խնդիրներուն ջանկին մէջ պէտք է գրել տայ խնդիրն ու իր անունը, և երբ կարգը գոյ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ և Ժողովը զանի մասիկ ընելու պարտաւոր է : Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ ըստիպողական ըլլալը Ժողովն որոշէ :

138. Խնդիր մը լաւ մը քննարկելն, վիճվելն և նոր վրայ ատենուն կարծիքը առնուելն եւրք պէտք է որ բըւէի գրիլ, և որոշում մը ներկայ դաժող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեանը կը տրվի :

139. Երբ ձայները հաստար դան՝ եթէ նախա-
գահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշուիլ
եթէ ոչ՝ աստենացեալին կողմը .

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որոշում տա-
լու համար պէտք է որ երկու ժողովները զոտ զոտ
քուէարկութիւն ընեն . երբ երկուքին ալ մեծազոյն,
մասը մի և նոյն որոշումն ըսած ըլլայ՝ խնդիրը կը լուծուի
իսկ հակառակ զիպուածի մէջ անհամաձայնութիւն
կը սեպուի երկու ժողովոց մէջ , և անորէնու թիւեր Մեծ
հանուր ժողովին կը մնայ (Հօդ . 1 , 12) .

141. Ժողովներուն մէջ սր և է ընտրութիւն ,
գատատան , ազգային սուրբի հաստատութիւն ,
Սահմանադրութեան վերաբնութիւն , գաղտնի քը-
ւէարկութեամբ կ'որոշի . նոյնպէս կ'ըլլայ նաև սուրբի
սր և է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պա-
հանջող ըլլայ .

142. Խորհրդոց աստենացեալները կրնան միմեակ
կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ աննշով
ուզած աստենին Քարտրական ժողովին մէջ ներկայա-
նալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վա-
րայ խօսիլ , բայց քուէ չ'ունին .

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամեն
նիստ իր աստենագրութիւնը պէտք է ունենայ , զոր ներ-
կայ գտնող անդամները կ'ըստորագրեն .

Մեծ հանուր ժողովին աստենագրութիւնները Պատ-
րիարքն ու զիւանին անդամները միայն կ'ըստորա-
գրեն .

Մեծ հանուր ժողովին անդամները Նշխարական Ընդհանր
մը վրայ կ'ըստորագրեն ժողովարանը մասած աստենին .

144. Ըմեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան
կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր
տեղեկագիր պէտք է որ սոց իր հանարառու ժողովին
կամ խորհրդին .

Սոյն տեղեկագիրք բոլոր անդամոց կողմէն ըստորագրեալ պէտք է ըլլայ :

143. Արեք անգամ իրացու վրայ առանց բանաւոր պատճառ մը գրով խնայելու ներկայ չը գտվող ժողովականին կամ խորհրդականին անունը ասեմնագրութեան մէջ կը յիշվի, և ժողովին կամ խորհրդին կողմէն ասեմնագրեալ անոր կը գրէ չը գաւուն պատճառը հարցնելու համար : Եթէ պատասխան չ'ընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը զինքը գոհ չ'ընէ, երկրորդ գրութեամբ ժողովն դատումը կ'իւայնէ անոր և կը յարգրէ որ յսկայրդ ասեմնին ներկայ գտվի : Եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտաւորք մ'ը զանցառութիւն ըրած ըլլալով իր զանցառութիւնը հրատարական կը սեպի : Եթէ այսպիսեաց թիւը մինչև 3 համի, ժողովն նախագահը կամ ասեմնագրեալ անոնց տեղ զանոնք ընտրող ժողովն ուրիշ անդամներ կը խնդրէ (1) :

Այնք պէտք ընէ երբ նոյն թիւով ժողովանք կամ խորհրդանք պակսին թէ վախճանական և թէ հրատարական պատճառով :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ԱՆՎՄԱՆԱԳՐՈՒԹԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առ ժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունվի ու կ'ընտարագրվի, և յետոյ սահմանադրականապէս կայմեայ ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով Ազգին կողմէն կը վաւերացնէ զանի և վճարար կը հաստատէ :

1 Արտարգրութեան ընդհանուր ժողովն մեքսիկեալ է :

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային Ղիւանատան մէջ կը պահպնէ և օրինակը տպագրութեամբ կը հրատարակվի :

147 . Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունվելէն ետքը՝ Ազգին որոշուած յայտնի կամէր կը սեպվի , և անոր պարունական տրամադրութիւնքը անփոփոխելի են ազգային Արշուածեան կողմէն :

Իսկ երբ ազգային Արշուածեան Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ , ինք միշտ համեմատ վարվելով անանց , իր ընթացքին երբորդ տարւոյն վերջերք միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Րնդհանուր ժողովին :

148 . Արք Րնդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի , Ավերաքննութեան ժողով մը կը կազմէ սակ կերպով :

Արձական և Քաղաքական ժողովներէն շտապան հոգի , Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի , և ասանց մէ գործ 10 հոգի գոր Րնդհանուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ , ընդ առէնը 30 հոգի :

149 . Ավերաքննութեան ժողովը ազգային Արշուածեան կողմէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ ստանելով , պէտք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբը Րնդհանուր ժողովին կը ներկայացնէ :

150 . Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է , երբ հիմնական ըսկզբանց տրամադրութեանցը համաձայն չ'ըլլայ , այն ըսկզբանց որով ազահոփեալ են Ազգին իրաւունքները , իրաւունք որոնց վրայ Ազգն անգամ չ'ունի իշխանութիւն անօրէնութեան զի մանդատայն պարտիք են :

Ազգային խորհուրդի 19
յուլի 1911

ՊՈՒԽՈ

	Թ-Ն	ԵՆ-ԷՅ	ԵՒ-ԻԻ-Ա-Յ	ԲԻ-
1	Պ. ու. մ. քափու.	Ս. այր. Լ. կեղեղի		24
2	"	Ս. Յարու. թ. ի. ն.		2
3	Ս. Է. արկի. քառ.	Ս. Յովհաննէ. ս.		6
4	Լ. Է. արկի. քառ.	Ս. Թ. արկ. տ. և. Թ. արթ. արմէ.		4
5	Ս. ամ. արթ. ի. ար.	Ս. Վ. Է. արգ.		15
6	"	Ս. Յ. արգ.		1
7	{ Վ. արու. լ. քափու. Ս. այր. ք. կեղ. Վ. Ս. ամ. քառ. Վ. Ս. արկի.	Ս. Յովհաննէ. ս.	}	2
		Ս. Ս. ամ. քառ.		
		Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		
		Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		
8	Թ. արկի. քառ.	Ս. Ա. արկ. արգ. տ.		2
9	Վ. արու. ամ. ամ. ի. ն.	Ս. Յ. Ա. արկ. արգ. տ.		1
10	Վ. արու.	Ս. Ն. արկ. արգ. տ.		15
11	Լ. ար. ս.	Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		1
12	"	Ս. Լ. ար. ս.		4
13	Թ. արու. ամ. ամ. ի. ն.	Ս. Ս. ամ. քառ.		15
14	Վ. արու. ամ. ամ. ի. ն.	Ս. Յ. արգ.		1
15	{ Վ. ար. ս. Վ. ար. ս.	Ս. Լ. ար. ս.	}	17
		Ս. Վ. ար. ս.		
16	Վ. ար. ս.	Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		10
17	Օ. ար. ս.	Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		14
18	{ Վ. ար. ս. Ն. ար. ս. Ս. ար. ս. Վ. ար. ս.	Ս. Թ. ար. ս.	}	5
		Ս. Ս. ամ. քառ.		
		Ս. Լ. ար. ս. մ. ամ. ամ. ի. ն.		
		Ս. Վ. արու. ամ. ամ. ի. ն.		
19	{ Վ. ար. ս. Վ. ար. ս.	Ս. Ա. ար. ս.	}	1
		Ս. Ս. Վ. ար. ս.		
20	{ Վ. ար. ս. և. ար. ս.	Ս. Վ. ար. ս.	}	2
		Ս. Վ. ար. ս.		
21	Ս. ար. ս.	Ս. Վ. ար. ս.		8
22	{ Վ. ար. ս. Վ. ար. ս.	Ս. Թ. ար. ս.	}	11
		Ս. Վ. ար. ս.		
23	Վ. ար. ս.	Ս. Թ. ար. ս.		1
24	Վ. ար. ս.	Ս. Վ. ար. ս.		1

Գ Ա Ւ Ա Ռ Ռ Ք

ԳՆՈՒԿԱՆ ԿՆԻՔՆԵՐ ԵՄԻՆԻ ԵՆԿՆԵՐ

Ա—Շարքում	Երեւոյնում	Ա—Շարքում	Երեւոյնում
Ենթ-ճշտ	Ստոր-ճիշտ	Ենթ-ճշտ	Ստոր-ճիշտ
1	Էրու սայէմ	25	Ընն
2	Էզգայանս	26	Տեղեկ
3	Ընթիւս	27	Սպասեմիս
4	{ Մայրս Տարածն Սիս } 	28	Սիւրն
		29	Ընթեւ
5	Սարաշ	30	Քիլիս
6	Նամին	31	Շապին քարահասար
7	Օւէսթուն	32	Սերաստիս
8	Ըսանայ	33	Էզգակիս
9	Էզեւիս	34	Սարսիան
10	Տիգրանակերտ	35	Ըմասիս
11	Քիլիսիս	36	Տրասիգոն
12	Պաղատա	37	Նամեկ
13	Նարէշ	38	Էօզգատ
14	Սան	39	Սեւասիս
15	Ընթամար	40	Պաղատիս
16	Սարս	41	Սեւանիս
17	Սուշ	42	Օսիւնիս
18	Էրզնկ	43	Պրուս
19	Նարեք	44	Պանարան
20	Սային	45	Մեկմիկիս
21	Քարեք	46	Սասանիս
22	Ըրասիկ	47	Էզրանուպիս
23	Նար	48	Սարսիս
24	Պեղե	49	Սպասիս
		50	Սանայ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՆԴԱՄՔ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՍՈՍ

ՍԵՐԱՍՏԻՈՑ

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱԼԱՆԱՑ

ԽԱՍԳԻՒՂԻ

Տ. ՅՈՎԷԱՆՆԷՍ ՔԱԼԱՆԱՑ

ԼԻՒՆԲԵԱՐՊԵՏԵՆՏԵԱՆ

ԱԼՔՈՒՆ ՏՈՒՐԻ

ԱՆԵԱՆՆԵԱՆ Պ.

ԻՌԹԻՂԻՏԵԱՆ Կ. Ա.

ՄԻՍԱՔԵԱՆ Վ.

ՍԻՒՐԷՆՆԵԱՆ Յ.

ՓԷՇԵՐՄԱԼՃԵԱՆ Ը.

ՔՈՔԻԿԵԱՆ Բ.

ՅՈՎԷԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՂԱԼԱՔԻՈՑ

Տ. ՅՈՎԷԱՆՆԷՍ ՔԱԼԱՆԱՑ

ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՂԱՔՕՆ Մ.

ԵԱՂՈՒՊԵԱՆ Ե.

ՄԻՆԱՍ Մ.

ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ Ե.

ՔԱՅՍԷՐԵԱՆ Ք.

ՕՏԵԱՆ Գ. Ա.

Հայաթիս 20 մայիս 1860.

Մզգային Մնդհանուր Ժողովին միաձայն
 հաւանութն ընդունված և ըստորագրված :

Կ. Պօլիս, ի Պատրիարքարան Հայոց :

24 Մայիս 1860 :



Գին 5 զրու 2

Մեխականու թիւն ազգային մատուկին :

